ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

25 սեպտեմբերի 2014թ. թիվ 167

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 16-ի «2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահներ նշանակելու մասին» թիվ 2164-Ա հրամանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների 2014թ. ձմեռային զորակոչի ընթացքում հիվանդանոցային հետազոտություն, փորձաքննություն և բուժում իրականացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 25
ք.Վանաձոր